

րում վասն այսպիսեաց՝ թէ ընդէ՞ր, ինքն ընդդէմ պատասխանիս բանս անպարկեշտս բարբառեալ այլազգարար վարի ասելով՝ թէ շահին հրամանաւ առնա իմ է, ուտեմ եւ ըմպեմ եւ առ որմն միգեմ, զի՞ կայ ձեր. զոր ամենեքին մեք զիտակ եւ վկայ եմք, զի ոչ կամօք եւ կտակազրիւ լուսաւոր հողի Փիլիպպոս հոգեւորտիրին եղեւ սա կաթողիկոս, եւ ոչ հաւանութեամբ ամենայն եպիսկոպոսաց եւ իշխանաց ազգիս, այլ ինքնազուլս անձամբ բռնակալեալ տիրապետեաց, եւ մինչեւ ցայժմ բռնութեամբ վարելով՝ հոգեւոր իշխանութեամբ ոչ բաւականնայ զպատարտութիւն եկեղեցականաց, այլ հարկանելով յերկաթս եւ ի կապանս, մինչ ի ձեռս եւ ի դատաստանս այլազգեաց մատնիչ լինի:»

Արդարեւ հարկ է նշել այստեղ Յակոբ Զուղայեցի կաթողիկոս օծուեցաւ անբացատրելի հապճեպով եւ ըստ երեւոյթին առանց աշխարհական իշխանաւորներու քուէին: Գաւրիթեցիին բացատրութիւն մը չի տար: Ապացոյց չկայ որ Փիլիպպոս Աղբակեցիին իրեն յաջորդ յանձնարարած է Յակոբ Զուղայեցի: Ոմանց կարծիքը, թէ Յակոբ Զուղայեցի տեղակալ էր Փիլիպպոսի, վերջնոյն էջմիածնէն բացակայութեան առնելով, դարձեալ չի հաստատուիր: Անտարակոյս եթէ կար որեւէ ընդիմութիւն իր կաթողիկոսանալուն, Յակոբ Զուղայեցի իր զօրեղ նկարագրով կրնար բռնացած ըլլալ, որ ընտրութիւնը արագութեամբ կատարուի: Փիլիպպոս Աղբակեցի էջմիածինը հարուստ եւ բարեք վիճակի մէջ կը թողուր, բան մը որ կրնար շատ մը եկեղեցականներու ախորժակը զրգռել եւ կաթողիկոսական ընտրութեան մէջ հատուածներ ստեղծել ընտրողներուն միջեւ: Նկատի առնելով իր կաթողիկոսութիւնը կարելի է խորհիլ որ Յակոբ Զուղայեցի վարչական եւ տնտեսական բարձր կարողութիւն մը ցոյց չի տար: Բնաւորութեամբ բուռն կ'երեւայ, եւ վտանգաւոր պառակտումներու պատճառ եղած: Սակայն մենք հոս միայն իր մասին կենսազրական նիւթեր կ'ուզենք տալ: Ըն-

դունելով հանդերձ որ արտաքին ուժեղ պայմաններ ստեղծեցին վիճակ մը որոնք պատճառ եղան էջմիածնայ եւ Յակոբ Զուղայեցիի դժուարութիւններուն, սակայն նոյն առնել նշանակալից է որ Փիլիպպոս Աղբակեցիի օրով պայմանները նոյնն էին, մինչ ան կրցաւ որոշ չափով եւ քիչ ու շատ յաջողութեամբ արդիւնաւոր կերպով իր պաշտօնը կատարել, էջմիածնայ բարգաւաճման ալ մեծապէս նպաստելով: Նոյն վիճակը նաեւ Յակոբ Զուղայեցիի յաջորդ Նղեազար Այնթապցիի կաթողիկոսութեան շրջանին ստեղծուեցաւ:

«Վեշտաներորդ՝ զի ստապարծ եւ բաղայօղ բանիւ պատճառեաց ի դէմս աշխարհի ի սուրբ յերուսաղէմ գնալ եւ զաղտազոյի խորհրդեամբ բարձեալ ընդ ինքեան զնշխար սրբոյն Հոսիսիմեայ եւ Գայիանեայ՝ կամէր տանել յերկիրն Ֆրանկաց եւ այնու առնուլ բազում գանձքս ի նոցանէ եւ զալ օծանել զոմն թագաւոր Հայոց ընդդէմ իշխանութեան Պարսից: (Այս մասին արդէն ըսինք այս նամակին սկիզբէն առաջ:) Եւ ի ժամ գնացից իւրոց զոմն մահմետական... առնուն հրամանաւ խանին եւ ձեռագրով կնքոյ իւրոյ ետ նմա արքեպիսկոպոսական հրաման, զի իշխեսցէ ի վերայ վանորէից եւ առաջնորդաց եւ եկեղեցեաց, կարգաց եւ կրօնից, չհասի եւ հասի քննութեան առնել եւ հրաման տալ եւ գանձանսն ի ձեռս բռնաւորաց մատնել, զոր վաղ ուրեմն անյաջողակ մնացեալ խորհրդոյ իւրոյ՝ դարձաւ ի Թոխաթոյ, եւ եղեւ ուխտազրուժ առ սուրբ յերուսաղէմ, որպէս եւ պարծէրն անդր ընթանալ:»

Ասիկա ոչ միայն ստապարծ մատնութիւն մըն է այլ ծիծաղելի նոյնիսկ իբր ամբաստանութիւն, որուն աւելի զարդարուած մէկ տարբերակին արձագանգ եղաւ Սահակ Արքեպիսկոպի 1666 թուակիր իր նամակին մէջ: Հոս ցոյց կը տրուի զարմանալի տղայական ըմբռնում Հայկական թագաւոր ու թագաւորութիւն ունենալու հաւանականութեանց մասին: Որքան կը յիշեցնէ Օրբի Հայաստանը ազատագրելու ցնորբանութիւնը... ո-